«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություն

Պետության կողմից ֆինանսավորվող Արցախի Հանրապետությունում 2019թ. սեպտեմբերի 8-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնելու դրամաշնորհային ծրագրի գումարների օգտագործման վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2019

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

15.11.2019
N 041916

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ. Գնորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»
հասարակական կազմակերպության Ընդհանուր Ժողովին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (Կազմակերպություն)՝ պետության կողմից ֆինանսավորվող «Արցախի Հանրապետությունում 2019թ. սեպտեմբերի 8-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտորդական առաքելություն» դրամաշնորհային ծրագրի (Ծրագիր) գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվության (Ֆինանսական հաշվետվություն) աուդիտ 2019թ. օգոստոսի 26-ից նոյեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածի համար :

Մեր կարծիքով Ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճիշտ է ներկայացնում Ծրագրի դրամական միջոցների մուտքերն ու ելքերը 2019թ. օգոստոսի 26-ից նոյեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածի համար՝ համապատասխանելով Ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքին:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝«Աուդիտորի պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օրգաններում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվության համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ Ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններում նկարագրված հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն: Դա ներառում է տվյալ պայմաններում Ֆինանսական հաշվետվության պատրաստման համար հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառելի լինելու ղեկավարության որոշումը, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողությունը, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է Ֆինանսական հաշվետվության պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որը զերծ է էական խեղաթյուրումներից՝ անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ:

Ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Աուդիտորի պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով Ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս Ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք Ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք Ֆինանսական հաշվետվությունում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ Ֆինանսական հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք Ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Լ. Ղևոնդյան

15.11.2019թ.

Հաշվետվություն

Կատարված ֆինանսական ծախսերի վերաբերյալ

Պետության կողմից տրամադրված ֆինանսական աջակցության գումարը կազմել է 17,480,000 դրամ,

Կազմակերպության կողմից կատարված ծախսերը կազմել են 14,522,024 դրամ:

Բյուջեի տողեր	Բյուջեի կատեգորիա	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ	Կատարված ծախսեր ՀՀ դրամ	Մնացորդ ՀՀ դրամ
1	**Աշխատակազմ:**							
1	Ծրագրի աշխատակազմի համախառն **աշխատավարձ:**							
1.1	Կազմակերպական թիմ Հայաստանում և Արցախում- ծրագրի համակարգողներ/մասնագետներ, վարչական/ֆինանսական թիմ (12 հոգի)	25%	ամիս	1	8,000,000.00	2,000,000.00	2,000,000.00	0.00
	Ընդամենը աշխատավարձեր:				**8,000,000.00**	**2,000,000.00**	**2,000,000.00**	**0.00**
2	**Ծրագրային ծախսեր**							
Բաղադրիչ 1: Կարճաժամկետ դիտորդների դասընթաց					205,420.00	925,200.00	512,500.00	412,700.00
2.1.	Ճանապարհածախս (կարճաժամկետ դիտորդներ)		դասընթաց	3	100,000.00	300,000.00	0.00	300,000.00
2.2	Դահլիճի վարձակալություն		դասընթաց	3	100,000.00	300,000.00	165,000.00	135,000.00
2.3	Մասնակիցների սուրճի ընդմիջում		անձ	60	1,200.00	72,000.00	168,300.00	-96,300.00
2.4	Ուսուցողական նյութեր (գրիչ, նոթատետր, թղթապանակ, ձեռնարկ և այլն)		փաթեթ	60	3,500.00	210,000.00	135,600.00	74,400.00
2.5	Բեյջ		հատ	60	720.00	43,200.00	43,600.00	-400.00
Բաղադրիչ 2: Ընտրական օր- տեղական դիտորդներ					189,500.00	2,390,000.00	1,857,505.87	532,494.13
2.6	Կարճաժամկետ դիտորդների համակարգողներ		անձ	5	150,000.00	750,000.00	801,467.00	-51,467.00
2.7	Կարճաժամկետ դիտորդներ		անձ	50	15,000.00	750,000.00	795,000.00	-45,000.00
2.8	Հեռահաղորդակցման ծախսեր		անձ	100	5,000.00	500,000.00	261,038.87	238,961.13
2.9	Գիշերակաց		անձ	20	19,500.00	390,000.00	0.00	390,000.00
Բաղադրիչ 3: Օպերատորների դասընթաց					**1,200.00**	**18,000.00**	**6,315.00**	**11,685.00**
2.10	Մասնակիցների սուրճի ընդմիջում		անձ	15	1,200.00	18,000.00	6,315.00	11,685.00
Բաղադրիչ 4: Համակարգող կենտրոն					652,500.00	3,002,000.00	2,166,278.00	835,722.00
2.11	Տարածքի վարձակալություն (3 սենյակ * 2 օր)		օր	2	145,000.00	290,000.00	264,000.00	26,000.00

2.12	Օպերատորների վճարներ		անձ	8	31,000.00	248,000.00	217,000.00	31,000.00
2.13	Իրավաբաններ խորհրդատվության համար		անձ	8	48,000.00	384,000.00	384,000.00	0.00
2.14	Սուրճի ընդմիջում և սնունդ		անձ	30	15,000.00	450,000.00	536,000.00	-86,000.00
2.15	Հեռահաղորդակցման ծախսեր (օպերատորներ և իրավաբաններ)		անձ	20	24,000.00	480,000.00	59,200.00	420,800.00
2.16	Գիշերակաց համակարգող կենտրոնի թիմի համար		անձ	40	19,500.00	780,000.00	360,000.00	420,000.00
2.17	Տեխնիկական սպասարկում (ինտերնետ/կայք)		անգամ	1	300,000.00	300,000.00	311,278.00	-11,278.00
2.18	SMS բլասթ		անգամ	1	70,000.00	70,000.00	34,800.00	35,200.00
Բաղադրիչ 5: Հետընտրական - ընտրախախտումներ, վարույթներ					220,000.00	1,100,000.00	0.00	1,100,000.00
2.19	Իրավաբաններ իրավախախտումներին հետամուտ լինելու համար		վարույթ	5	220,000.00	1,100,000.00	0.00	1,100,000.00
Բաղադրիչ 6: Հետընտրական - գնահատում					51,200.00	86,000.00	18,639.00	67,361.00
2.20.	Դահլիճի վարձակալություն		հանդիպում	1	50,000.00	50,000.00	0.00	50,000.00
2.21	Սուրճի ընդմիջում մասնակիցների համար		անձ	30	1,200.00	36,000.00	18,639.00	17,361.00
Ընդամենը ծրագրային ծախսեր:					1,319,820.00	7,521,200.00	4,561,237.87	2,959,962.13
3	**Այլ ուղղակի ծախսեր**							
3.1	Ճանապարհածախս (Հայաստան-Արցախ-Հայաստան)		ուղևորություն	3	80,000.00	240,000.00	162,000.00	78,000.00
3.2	Ճանապարհածախս Արցախում		կմ	2500	200.00	500,000.00	1,122,402.21	-622,402.21
3.3	Գիշերակաց ծրագրային թիմի համար		օր	45	19,500.00	877,500.00	670,328.72	207,171.28
3.4	Օրապահիկ աշխատակիցներին		օր	45	8,000.00	360,000.00	238,833.28	121,166.72
3.5	Տարածքի վարձակալություն		ամիս	1	145,000.00	145,000.00	180,000.00	-35,000.00
3.6	Դիզայն / տեղեկատվական նյութեր		հատ	1	93,800.00	93,800.00	7,050.92	86,749.08
3.7	Ձեկույցի տպագրություն		օրինակ	100	1,000.00	100,000.00	18,900.00	81,100.00
3.8	Սննդի ծախսեր		մարդ	50	6,170.00	308,500.00	1,327,723.51	-1,019,223.51
3.9	Աուդիտ		ծառայություն	1	480,000.00	480,000.00	576,000.00	-96,000.00
Ընդամենը ուղղակի ծախսեր:					833,670.00	3,104,800.00	4,303,238.64	-1,198,438.64

4	**Հայաստանյան/շրջիկ դիտորդություն (ԹԻՀԿ)**							
	Դասընթացներ դիտորդների համար (Հայաստան)				**54,700.00**	**359,000.00**	**145,208.00**	**213,792.00**
4.1	Դահլիճի վարձակալություն		օր	2	50,000.00	100,000.00	0.00	100,000.00
4.2	Սուրճի ընդմիջում դասընթացների մասնակիցների համար		անձ	70	1,200.00	84,000.00	9,608.00	74,392.00
4.3	Ուսուցողական նյութեր (գրիչ, նոթատետր, թղթապանակ, ձեռնարկ և այլն)		փաթեթ	50	3,500.00	175,000.00	135,600.00	39,400.00
	Ճանապարհային ծախսեր Երևան-Ստեփանակերտ-Երևան				**159,500.00**	**3,070,000.00**	**2,047,792.53**	**1,022,207.47**
4.4	Ճանապարհածախս (միկրոավտոբուս)		ուղևորություն	8	140,000.00	1,120,000.00	887,013.00	232,987.00
4.5	Գիշերակաց (50 անձ * 19,500)		գիշեր	100	19,500.00	1,950,000.00	1,160,779.53	789,220.47
	Ընտրական օր - մոնիտորինգ				**28,500.00**	**1,425,000.00**	**1,464,547.00**	**-39,547.00**
4.6	Հայաստանյան կարճաժամկետ և շրջիկ դիտորդներ		անձ	50	28,500.00	1,425,000.00	1,464,547.00	-39,547.00
	Ընդամենը ուղղակի ծախսեր՝ հայաստանյան դիտորդներ:				**242,700.00**	**4,854,000.00**	**3,657,547.53**	**1,196,452.47**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**17,480,000.00**	**14,522,024.04**	**2,957,975.96**

Սոնա Այվազյան
Գործադիր տնօրեն
15.11.2019թ.

Ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություններ

1 Գործունեության տեսակները

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» Հասարակական Կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) գրանցվել է 2000թ. օգոստոսի 21-ին ՀՀ Արդարադատության նախարարի թիվ 953 հրամանով: Վերագրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2003թ. ապրիլի 17-ին, վկայական՝ թիվ 03 Ա 060363: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից գրանցված է Կանոնադրության թիվ 1-2 փոփոխություն՝ 2006թ. փետրվարի 21-ին, թիվ 2-2 փոփոխությունը՝ 2008թ. փետրվարի 11-ին, թիվ 3-2 փոփոխությունը՝ 2009թ. մայիսի 11-ին: Նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցվել է 2012թ. սեպտեմբերի 18-ին, թիվ 1-2 փոփոխությունը՝ 2017թ. հոկտեմբերի 31-ին:
Կազմակերպությունն անդամներ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հասարակական միավորում է, որը ստեղծվել է Հիմնադիրների որոշմամբ: Կազմակերպության նպատակն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Կազմակերպության խնդիրներն են՝

- ✓ աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը,
- ✓ աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը,
- ✓ նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը,
- ✓ խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:

Ըստ կանոնադրության՝ գույքի ձևավորման աղբյուրներն են՝

1. անդամների ներդրումները, անդամավճարները,
2. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
3. իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները,
4. դրամական մուտքերը պետական բյուջեից,
5. նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
6. հանգանակությունները:

Կազմակերպության գրանցված գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Սարյան 12 հասցեում:

2 Ֆինանսավորումը և ֆոնդերի օգտագործումը

Մուտքերն ընդգրկում են, 26.08.2019թ. ՎԱ-ԴՇ-19/01 պայմանագրի համաձայն, պետության կողմից դրամաշնորհի ձևով Կազմակերպությանը 2019թ. օգոստոսի 26-ից նոյեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածի համար տրամադրված ֆինանսական աջակցության գումարը 17,480 հազ. դրամի չափով : Նշված ժամանակահատվածում Կազմակերպության կողմից կատարված ծախսերը կազմել են 14,522 հազ. դրամ:

3 Պատրաստման հիմունքը

Կազմակերպությունը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն՝ ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից: